Նախագիծ

երկրորդ ընթերցում

Կ-1345[5]-27.04.2026-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված բնակության օրինականությունը հավաստող վկայականը տրամադրելու, տրամադրումը մերժելու, անվավեր ճանաչելու, ուժը կորցնելու, վավերականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բնակության օրինականությունը հավաստող վկայականը տրամադրելու մասին որոշում կայացնելու նպատակով ներկայացվող դիմումների քննարկման կարգը, պահանջվող փաստաթղթերի ցանկը և որոշում կայացնելու ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը և մշտական կացության քարտը: Ժամանավոր կացության քարտը և մշտական

կացության քարտը տրամադրելու, տրամադրումը մերժելու, անվավեր ճանաչելու, ուժը կորցնելու, վավերականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:»:

2) 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձին տրվում է «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված կացության քարտ:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված էլեկտրոնային միասնական հարթակի գործարկման մասին իր պաշտոնական կայքում միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բայց ոչ ուշ, քան 2026 թվականի նոյեմբերի 1-ը:

2. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հատուկ կացության կարգավիճակ ստացած անձին տրվում է հատուկ անձնագիր, իսկ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հատուկ կացության կարգավիճակ ստացած անձին՝ «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված կացության քարտ:»: